


ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ղզլար (Կիզլյար) քաղաքը գտնվում է Դաղստանի Ինքնավար Առվետական Առցիալիսական Հանրապետության հյուսիսային մասում, հին Թերեք գետի աջ ու ձախ գեղատեսիլ ափերին, Կասպից ծովից 65 կմ արեւմուտք։

Ղզլարը շրջանային կենտրոն է և իր յուրահատուկ տեսքով տարրերվում է հանրապետության մյուս քաղաքներից։ Այն ղանվում է Մեծ Կովկասի հյուսիս-արեւելյան կարեւոր ճանապարհների հանգույցում, որոնք տանում են հյուսիսում՝ գեպի Աստրախան, արեւելքում՝ Կասպից ծով, հա-



1. Ղզլար քաղաքը Թերեք գետի դելտայում։

րավ-արեւմուտքում՝ Գրոզնի և Մոզդոկ, հյուսիս-արեւմուտքում՝ Թերեքի-Մեքթեբով՝ Նոդայական տափաստանը։ Թերեք դետը Ղզլարի մոտ կաղմում է գելտա հեռայն բաղուկներով՝ Հին Թերեք, Նոր Թերեք, Թալովկա և Պրովա։

Թերեքից Ղզլարի մոտ հանված է մեծ ջրանցք, որն անցնելով քաղաքի միջով, ոռոգում է խաղողի և պտղատու այգիները։

Ղզլարի տեղը տափարակ է, նույնն է և շրջակայքը, մոտիկ սարեր չկան, պարզ եղանակին, մոտ 120 կմ հեռավորությամբ, կարելի է նշմարել Կովկասյան լեռնաշղթայի ձյունափայլ գաղաթները։

Ղզլարի հողատարածքի մեծ մասը խաղողի, պտղատու այգիներ են ու արոսավայրեր։ Հայանի են Ղզլարի ընդարձակ արոտատեղերը, ուր արածում են ոչխարների ռաղմաթիվ հոսեր՝ Դաղստանից, Վրաստանից, Հյուսիսային Կովկասի այլ վայրերից։ Մոտ 2—3 միլիոն գլուխ մանր եզերավոր անասուններ մինչև ուշ աշուն լինում են այգ արոտավայրերում։ Այնտեղ կառուցված են պատսպարներ անասունների համար, ինչպես նաև բնակարաններ ու ճաշարաններ՝ հովիվների ու հյուրերի համար։

Ղզլարից երեք կիլոմետր հեռու, Թերեքի աջ ափին սկսվում են անտառները։ Դրանք հարուստ են ընաիր ծառատեսակներով ու թփերով։

Ղզլարի կլիման մոտ է Հարավային Ղրիմի և Կովկասի սեծովյան կլիմային։ Ղզլարը գտնվում է միջին տաք գոտում։ Ամառը այնտեղ շոգ է, ձմեռը՝ համեմատաբար սառը։ Տեղի կլիմայի վրա մեծ ազդեցություն ունեն Կասպից ծովից փչող արեւելյան քամիները (ցիկլոնները), որոնց պառճառով եղանակը րավականին փոփոխական է։ Ձյունը սակավ է, ձմեռը լինում է կարճաժամ։

Ղզլարից 18 կմ հարավ Բեքեթեյ (ինչպես ղզլարցիք են անվանում) գյուղն է, որի պաշտոնական անունն է Կարարագլի։ Այս գյուղի բնակչության 90 %-ը հայեր են, որոնց խոսակցական լեզուն այսօր էլ հայերենն է՝ Ղզլարի րարառը,

չնչին տարբերությամբ Լաւերեն ևն խոսում նույնիսկ այլապիսիները:

Քերթնեցիների դիմավոր դբադմունքը մինչև օրս էլ խաղողագործությունն ու դինեդործությունն է: Այստեղից խաղողի բերքը ուղարկվում է Ղլարի դինու պործարան:

Հիշյալ անդերի հայերը պագթել են Պարսկաստանից՝ 1797 թվականին: Ղլար դադթած հայերի մի մասը՝ հիմնականում գյուղացիությունը, բնակություն է հաստատել Բեքթել հայաբնակ գյուղում ավելի ուշ: Առաջին քարավանը բաղկացած է եղել 153 ընտանիքից:

Քերթնեցիները ոռոսական կոռոսավարությունից ստանում են մշակելի աղաս հողեր, յուրաքանչյուր ծիրին 30 դեսյաին, և հետևյալ արտոնությունները՝ 10 տարով գյուղացիությունը աղատվում է հարկաավությունից և վինսկոշումից, որից հետո նրանք վճարելու էին պետությանը՝ սուրուց մեկ տոկոս:

Ներկայումս գյուղը բարգավաճ վիճակում է: Այն ունի կուլտուրայի սուն՝ ինքնագործ խմրով, դրադարան-ընթերցարան, կինոթատրոն, զպրոցներ և այլն:

Քերթել գյուղը վարչականորեն կապված է Ղլարի հետ: Գյուղի բնակչության թիվը ներկայումս հաղարից անցնում է: Քերթնեցիների կենցաղը շատ մոա է Ղլարցիների կենցաղին և գրեթե վերջինների անբաժանելի մասն է կազմում:

Ղլարից մոա 2 կիլոմետր հեռավորության վրա էր նաև ս. Գեորգ եկեղեցին կամ, ավելի ճիշտ, ուխտատեղին: Ղլարցիների համար վերջինս սիրված վայր էր, ուր դալիս էին մեծ տոների օրերին ժամանցի, վանքի բակում, ծառուղիններում, պովաշունչ Թերեքի գեղատեսիլ ափերին հանգստանալու:

Ուխտատեղին և նրան կից մի քանի խրճիթները կառուցվել են 1828 թվականին: 1851 թ. Լեքցիոխ Սահփան Յուղրաշյանի ջանքերով վերանորոգվում է եկեղեցին և ջրջակայքը կառուցապատվում, բարեկարգվում: Ուխտատեղին ունեցել է նաև խաղողի ու պտղաաու ծառերի այգի, պահեսաանոցներ, դամբը և ախոռներ: Սոսու և բարդու անտառը, դիմացից հոսող Թերեքը, դեղեցիկ տեսք ևն ավել վայրին:

Ղլարի ժողովուրդը ս. Գեորգ ուխտատեղին անվանել է վանք: Դա հետևանք է այն բանի, որ անցյալում փորձեր են արվել շահագիտական, նպատակներով անդում վանական միաբանու-

թյուն ստեղծել: Եկեղեցու պատմություն մեջ նշված է, որ մի ինչ-որ ինքնակոշ վարդապետ ցանկացել է ախրանալ ուխտատեղին: Սակայն ծխական ժողովը միահամուտ իր վրդովմունքն է հայտնել վարդապետին ու մերժել: Այդ դեպքից հետո եկեղեցին պաշտոնապես հայաարարվել է ուխտաաեղի:

Ս. Գեորգի տոնի նախորդ օրը վաղ տոավոտից Ղլարցիք ոաքով, ձիով, ճեռանդակով (կառք), ջահել, աշել, կին, տղամարդ, երեխա, ուրատ, հարուստ եկել են ուխտատեղի մի քանի օրով, ոմանք՝ աղոթելու ու մատաղ անելու, ոմանք լոկ հանգստանալու, ոմանք էլ՝ ուրախ ժամանակ անցկացնելու: Ջանազան տեկնալություններով սյստեղ ևն հավաքվել տարրեր ազգի, սոցիալական տաբեր ծագման, զանազան գրույունքների աեր մարդիկ՝ մուրացկաններ, միջնորդներ և այլն: Հաբտն քաղաքներից (Մոզգոկ, Գրոզնի, Աստրախան) հայ հավատացյալների հետ այստեղ ևն շտապել սազանդարներ, ըմբիշներ, փահլեաններ (Դաղասանից), որոնք տոնականատարությունից հետո սուն ևն վերադարձել մեծ եկամուտներով:

Ուխտավորները տեղավորվել ևն հյուրանոցում, պաաշդամրներում կամ բակերում՝ ծառերի տակ, խոտերի վրա. փովող խալիների, խսիրների վրա և այլն: Անօթեան և անօգնական շեն մնացել նաև դաաարկաձեռն եկողները:

Հանգստանալուց հետո սկսվել է կեր ու խումը: Հրապարակի մեջաեղում՝ բարձր սյուներին ամրացված պարանի վրա, երկայն փայտը ձեռքին ճոճվելով իր «հունարն» է ցույց տվել լարող փահլեանը (լարախաղացը), զուխը սիրամաղդի փետուրներով դարդարած, երեսը սև ու կարմիր ներկած ժողովրդին ղվարճացրել է նրա ծաղրածուն: Ջվարճացնողների, ըմբիշների ղղեսաները պաաած ևն եղել թալիսմաններով, որոնց զորություն է վերագրել ժողովուրդը նրանց կատարած բոլոր ճարպիկ խաղերը:

Գիշերները ամբողջ բակը լուսավորվել է նավթի ջահերով և ղույնղղույն լամպերով: Ուխտատեղին հանդիսացել է նաև հայ երիաասարդության ուրախության, հանդիպման վայրը: Այստեղ ևն հաճախ աեղի ունեցել առաջին ծանոթությունները, նշանի խոսատումը և այլն: Այստեղ ևն հավաքվել նաև Համրարձման հինղշարթի օրը: Պատարագից հետո մեծ թափորը, հոդերականությունը և ժողովուրդը խաչ ու խաչվառով, քրոցնև-

րով ու խունկ ծխելով գիմել են դեպի Թերեք, որի ջուրը մեծ հունգրիսավորությամբ օրհնել է ավագ քահանան, արծաթե տղավնուց երեք անգամ ջրի մեջ կաթնեցրել է մեռոն, որից հետո շատերը մտել են ջրի մեջ և խմել օրհնած ջուրը: Ռուսները մինչև այժմ էլ ու Գևորգ ուխտատեղին անվանում են «Տոպուկայա» (ստոպուլ—բարդի բառից, որոնցով շրջապատված էր ուխտատեղին):

Ղզլարցի մարմնով դիմացկուն է և առողջ: Նթե պատտհում են նիհար, թույլ կազմվածքներ, գա, հավանաբար, ջերմախտի հետևանք է, որ մի ժամտնակ շատ ռարածված է եղել Ղզլարում:

Տղամարդկանց գեմքի մաշկը, կանանց համեմատությամբ, ավելի թուխ է: Ղզլարում բնությունված է մորուք և բեղեր պահելու: Անցյալում մորուք ունեցողները մեծամասնություն էին կադմում: Գեղեցիկ մորուք ունենալը ղզլարցի հայի համար պարծանք էր: Նրիտասարգների մեջ սակավ էին պատահում մորուք ունեցողներ, բայց բոլորն էլ անխտիր պահում էին գեղեցիկ սրած բեղեր:

Կանանց մոտ հնուց սովորություն կա՝ ականջների ընթակները ծակել և օղեր անցկացնել: Քթի պնչերը և շրթունքները ծակելու սովորույթ էլ եղել: Մարմինը գաշելու սիրահարներ՝ շատ քիչ:

Ղզլարում սակավ էին պատահում գեր աղամարդիկ, դա ավելի հատուկ էր կանանց: Չափից դուրս հաստ տղամարդուն անպաաճառ մի համապատասխան մականուն էին կպցնում:

Տեղին հատուկ է գանգաղ և ցածրաձայն խոսելաձեր: Խոսելու ժամանակ ղզլարցին գիմում է և ձեռքերի շարժումներին: Քայլվածքը աշխույժ է:

Ղզլարցու հագուստի գույնը և աարազը կախված էին նրա ճաշակից: Պետք է ասել, որ ղզլարցի հայր բնությունից օժաված էր նուրբ ճաշակով: Նա իր հագուստի մեջ ե իր կենցաղում գործադրում էր բոլոր գույները, բայց յուրաքանչյուր գույնը իր տեղին:

Մի ժամանակ ղզլարցին՝ հին սովորության համաձայն, որը Ղարաբաղից և Կովկասից բերել էին նրա նախնիները, նստում էր ծալապատիկ, թախտի կամ հատակի վրա, սակայն ժամանակի ընթացքում ուսական աղճեցությամբ նրա նստելու ձևը և մի քանի այլ սովորություններ արմատապես փոխվեցին: Գործածության առարկաներ դարձան բարձր սեղանն ու աթոռը:

Չափադանցություն չի լինի, եթե ասենք, որ Ղզլարի հայուհին արտակարգ գեղեցիկ է ու բարե-

կազմ: Նրա մաշկը սպիտակ է, այսերն ու շրթունքները վարդագույն, ատամները՝ հավասար, մազերը հիմնականում սև՝ նուրբ ալիքավոր, հոնքերը սև: Ղզլարի հայ աղջիկը գրեթե միշտ կրագես էր, լավ գիտեր մայրենի լեզուն, ազաա կարդում էր հայերեն և ռուսերեն, տեղյակ էր տնային տնտեսության հարցերին, հմուտ էր ճաշ պատրաստելու, շոր կարելու, ձեռագործելու մեջ եայլն:

Հայտնի է, որ ուրիշ քաղաքներից հայ երիտասարդները եկել են Ղզլար՝ իրենց բախտը փորձելու, այնտեղից հայ աղջիկ ուղեւն նույնպես կով: Ոմանց այդ հաջողվում է. ոմանց՝ ոչ. որովհետեւ սովորույթով օտար տեղ սղջիկ տալը բնությունված չէր:

Ըստ երեույթին պատահական չէ, որ քաղաքը կրում է «Ղզլար», այսինքն՝ «աղբիկներ» անունը: Գոյություն ունեցող մի քանի գեղեցիկ լեզենդները՝ նվիրված այն աղջիկներին, որոնք խեղճվել են Թերեք գետի կատաղի ալիքներում, նույնպես վկայում են տեղում գեղեցիկ կանանց առկայությունը:

Ղզլարի հին ընակիչներից են կումիկները: Նրանք շատ հին ժամանակներից ապրել են Դաղրստանի հարթավայրում: Հետագայում սրանց մի մասը, դեռես հայերից առաջ, գաղթել էր Ղզլար: XII և XIII դդ. կումիկները խառնվել են եկվոր թուրքական ցեղերի (գլխավորապես ղաչաղների) հետ: Այս վերջինների լեզուն հիմք է ծառայել կումիկների լեզվի կազմավորմանը:

Կումիկները նստակյաց են: Նրանց հիմնական ղրադմունքը եղել է երկրագործությունը, այգեգործությունը և առևտուրը: Կումիկները հին ժամանակներից առևտրական կապեր են ունեցել Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի ժողովուրդների հետ:

Կումիկները մահմեդականներ են: Նրանց ավանդական զգեստը եղել է «շուխան», «արխալուղը», մորթե փափախը, քուրքը և այլն: Կանանց շրջագգեստը «քարալայն» էր՝ երկար ջոր, մեջտեղից կտրված լայն թևերով: Գլխի ծածկոցը (չուտկա) բաղկացած էր գլխարկից և տուպրակից, որի մեջ խնամքով դարսվում էին երկար ծամերն ու արձակվում մեջքի վրա:

Ներկայումս կումիկները հագնվում են այնպես, ինչպես հայերն ու ռուսները: Նրանց երգերն ու պարերը ուղեկցվում են «զոմրդի» (մեր սաղի նման), գուղուկի, գուռնայի և դափի երաժշտու-

թյամբ, Հին երգերում տեղ են դրել ավանդու-
թյունները և ազգային հերոսների սխրագործու-
թյունները, ժամանակակից երգերն ավելի կեն-
ցազային են, սիրային, հարսանեկան:

Ղղարում կուժիկները ապրում են հայերի
հետ կապ-կապի, քսկ Ղղարից դուրս՝ առկեն-
դում: Նրանք խաղաղասիր ժողովուրդ են: Ի-
րենց սովորություններով ու «ազաթներով» գյու-
ղիորեն տարբերվում են հարեան լեռնականնե-
րից: Կուժիկը ընտելացված հակառակ է եղել, օրի-
նակ, արյան վրիժառությունը: Իրենց միջև ծագած
վեճերը նրանք աշխատել են լուծել խաղաղ ճա-
նապարհով, բարեկամարար:

Հարեան մյուս ժողովուրդը՝ նոզայներն են,
որոնք հին ժամանակներում թողնելով Վաղարշի
հովիտը, տեղափոխվել են Թերեքի երկու ափերը
և տարածվել մինչև Կասպից ծովը: XVI դարում
նրանք բնությունը են ուսուցանում հայատուգությամբ:

Անցյալ դարի վերջերին նոզայները քոչվո-
րությունից հեռացան անցնում են նստակյաց
կյանքի: Բացի իրաշարածությունից, նրանք կա-
տարել են նաև ցանք, ջանք են կորեկ, գարի,
եղիպտոսյան, նոզայները ցարական Ռուսաս-
տանի ամենահատմանց ժողովուրդներից էին:

Այժմ փոխվել է նոզայների կյանքը: Նրանք
ձեռք են բերել պրագմատիկություն, ունեն առաջադեմ
մասնավորականություն՝ բժշկներ, ուսուցիչներ,
գյուղատնտեսներ: Առկենդում կան դպրոցներ,
ակումբներ, հիվանդանոցներ: Շրջանային կենտ-
րոններում հրապարակվում են նոզայների լեզվով
թերթեր և պեքեր:

Հարեան ժողովուրդներից են նաև չեչենները,
որոնց պլանավոր պրագմատիկ է երկրագործու-
թյունը: Ցանում են եղիպտոսյան, կորեկ և այլն:
Ունեն հրաշալի արհեստավորներ հատկապես
պղնձագործության և զինագործության ընդհանու-
րաբար: Հայտնի է և բարձր է գնահատվում չեչենա-
կան կիրառական արվեստը՝ քարի և ղեճի վրա
կատարված փորագրություններն ու զարդաքան-
դակները, ոսկեթել ասեղնագործությունը ղեզասի
գոտու վրա և գորգագործությունը: Չեչենները
նույնպես մահմեդական են եղել, ունեն աշխույժ
բնավորություն: Տղամարդու հիմնական զբաղ-
մունքներից է եղել վարելք, հնձելը և ձիավարու-
թյունը, որի մեջ նրանք բարձր վարպետության
էին հասել:

Նստակյաց են նաև լեզգիները: Նրանք ղրաղ-
վել են երկրագործությամբ, անասնապահու-

թյամբ, մասամբ էլ մեղվաբուծությամբ: Նրանց
վաղուց է հայտնի եղել ոռոգումը, որը կառարել
են արհեստական ձևով, բուրդը դեռից վեր բարձ-
րացնելով: Արհեստներն այստեղ բավականին
գործաշատ են եղել, մանավանդ զինագործու-
թյունը: Մինչև ուսական օրենքների հաստա-
տումը, Դադաստանի լեզգիները դատավարությամբ
կատարել են իրենց ազգային դատավարների մի-
ջոցով՝ բանավոր: Հանցագործներին դատել են
«շարիաթի» և «ազաթի» օրենքներով: Դադաստա-
նում գործ են տնօրեն հինգ պաշտոնական լեզու-
ներ, որոնցից մեկը լեզգիերենն է:

Ղղարում բնակվել են նաև կազակներ՝ առա-
ջին ուսուցիչ, որ երևացել են Թերեքի ափին XIV
դարում «Թերեքի» կողմից (լեռնային կազակ-
ներ) անունով:

Հնում կազակները սկստանում են եղել
Փոքր Կարադաղի ազգային ժողովը ուսու-
խանականներին ընդունել է իր հովանավորու-
թյան ներքո և տվել նրանց մշակելի հողեր: Երկար
ապրիներ լեռնականների հետ կող-կողի ապրե-
լով, կազակները մասնամասն են կարադաղիցիների
ու չեչենների հետ, սահմանվել են ազգակցական
կապեր: Կազակների մեծ մասը կովկաս էին պա-
լիս առանց կանանց և շուտով տեղում ամուսնու-
նում չեչեն և կաբարդինցի աղջիկների ու կա-
նանց հետ: Կազակները շատ բան ընդօրինակեցին
լեռնականներից թե՛ տարադի (չուխա և մորթե
փափախ), թե՛ նիստ ու կացի և թե՛ դենք ղոր-
ծածելու մեջ, սակայն պահպանեցին իրենց լե-
զուն:

XVIII դ. սկզբում գնեբալ Ապրակախի հրա-
մանով այս կազակները փոխադրվեցին Թերեքի
ձախ ափը, ուր նրանք զետի երկայնքով 80 կմ
առաջնորդված վրա կառուցեցին իրենց հինգ
բնակավայրերը, որոնք պոլովոն ունեն ցայա-
ր (Ղղարի շրջան):

Խաղաղ ժամանակ կազակների հիմնական
զբաղմունքն է եղել երկրագործությունը, աղե-
գործությունն ու որսորդությունը:

Կազակները մշտական առևտրական հարա-
բերությունների մեջ են եղել լեռնականների և
Ղղարի հայերի հետ: Նրանք փոխանակում էին
աղ, միրգ, դինի, նաև իրենց կանանց ձեռքերով
պատրաստված կտվե ամանեղեն և այլ ապրանք-
ներ: Թոփարները սաանում էին գործվածքներ,
յափնջի, ոլնածե ամանեղեն, ոչխար, վառոդ,
պատրաստի ռարարաներ և այլն:

1736 թ. «Գրերենյան» կաղականները փոխադրվեցին Ղզլարի նորակառույց բերդը և անվանվեցին Թերեք-Ղզլարյան դորք: Քիչ ուշ Ղզլարի գործերին միացվեց և հայ-վրացական էսկադրոնը:

Ղզլարում ապրող վրացիները իրենց նիստ ու կացով ու սովորություններով շատ քիչ են տարբերվել հայերից: Պետք է նշել, որ վրացիները քաղաքում իրենց առանձին թաղը չեն ունեցել և ցրված ապրել են հայոց թաղում: Երկու աղդերի միջև գոյություն են ունեցել մոտիկ ազգակցական կապեր: Բոլոր վրացիները խոսել են հայերեն:

Ղզլարի կենցաղում նկատելի տեղ են դրավել նաև հնդիկները: Ղզլարի արխիվային փաստաթղթերում կա տեղեկություն, որ Ասարախանից րացի, հնդկական դաղութ գոյություն է ունեցել և Ղզլարում: XVIII դ. երկրորդ կեսին Ղզլար այցելած մի գերմանացի ճանապարհորդ կազմել է Ղզլարի քարանդ-պլանը, որի մեջ նա հաստատում է ոչ միայն այն փաստը, որ Ղզլարում եղել է հնդկական գաղութ, այլև որոշակի նշում է նրա տեղը: Այն գտնվել է քաղաքի հարավարևելյան թաղամասում, ոռոսական վանքի մոտ (ներկայումս քաղաքային հիվանդանոց), որին շատ մոտ էին քաղաքային մեծ շուկան և խանութների շարքը:

Այստեղ են ընկնում հնդիկ առետրականները, որոնք մեծածախ առետուր են կատարել Ռուսաստանի և Հնդկաստանի միջև: Հնդիկներն այստեղ ապրել են առանց ընտանիքների, որովհետև սովորութային իրավունքով հնդիկ կանանց արգելվում էր երկրից դուրս գալ:

Հնդիկ վաճառականների հաղուստից և կենցաղից կարելի էր կռահել, որ նրանք բոլորն էլ հարուստ են եղել, առեարի մեջ խիստ հմուտ ու ճարպիկ: Գաղութն ունեցել է ճաշարան, խոհանոց, ժողովարան, ուր նրանք հավաքվել են խորհրդի և ժամանցի: Նրանց սպասարկել են րադմաթիվ ծառաներ, խոհարարներ, կառապաններ, ունեցել են կովեր, դոմեշտեր, ձիեր և ուղանք: Վերջինները օգտագործվել են որպես դրասա: Ղզլարի հայ վաճառականները սերտ կապերի մեջ են եղել հնդիկների հետ: Սրանք նաև առետրական միջնորդներ էին ու թարգմանիչներ: Կարիքի դեպքում հայ վաճառականը դիմել է հա-

րուստ հնդիկներին և նրանցից աջակցություն ստացել:

Հայտնի է, որ XVIII դ. և XIX դ. առաջին կեսին Ղզլարը խոշոր աեղ է գրավել Ռուսաստանի և Արեւելքի առետրի մեջ, մանավանդ Հյուսիսային Կովկասում: Ղզլարի միջով էր անցնում առետրական կարեոր ճանապարհներից մեկը: Ղզլարի գաղութում ապրող հնդիկ վաճառականները, Ասարախանի վաճառականների հետ միասին, հաճախակի հասնում էին Աստրախան, Մոսկվա և այլ ոռուսական վաճառաշահ քաղաքներ:

Ղզլարի հին պատմական փաստաթղթերից տեղեկանում ենք, որ 1746 թ. հնդիկ առեառականները Ղզլարից Աստրախան են փոխադրել ութ մասնաքանակ արեւելյան ապրանքներ: Մի այլ փաստաթղթում, որ դրել են հնդիկ առետրականները 1747 թ. Ղզլարի բերդի պարետի անունով, կարգում ենք՝ «Մենք ժամանել ենք Ղզլարի բերդը Դերենդ քաղաքից (այն ժամանակ Պարսկաստան) պեռական առեառական նավով, խնդրում ենք թույլ տալ...» և այլն:

Անաարակույս, երկու երկրների առեառական դարգացող կապերին ղուղընթաց տեղի է ունեցել նաև տնտեսական, մշակութային և այլ կարգի փոխաղղեցություններ:

Ղզլարի ընակչությունը հեռեկալ պաակերն է ունեցել: 1785 թ. արքեպիսկոպոս Աղղությանի վիճակագրական տվյալների համաձայն: Ղզլարում եղել է 360 հայ առն: XVIII դ. վերջում Ղզլարի ընակչության թիվը եռապաակվում է նոր եկած հայ դաղթականներով: Մ. Բժշկյանի Ձճանապարհորղություն ի Լեհաստան» դրքում Ղզլարի մասին կարղում ենք (էջ 404)՝ «Տունք հայոց ավելի են, քան դհաղար»: 1804 թ. Ղզլարում եղել է ավելի քան 6.000 ընակիչ: Տվյալ ժամանակում դարավականին խոշոր քաղաք էր:

1826—27 թթ. Ղզլարի հայերի թիվը. աղամարղ՝ 2656, կին՝ 2436, ընղամենր՝ 5092: 1852 թ. տղամարղ՝ 4332, կին՝ 4128, ընղամենր՝ 8.460:

Քաղաքի ամրողը ընակչության թիվը հետագա աաղիներին եղել է.

1876 թ.—9.205 ընակիչ, որից հայեր՝ 6.040,

1909 թ.—10.742 »

1913 թ.—12.000 »

1936 թ.—20.425 »

1965 թ.—25.000 » որից հայեր՝ 4.000 մարղ: